

ԵՐԵՎԱՆԵՐՈՐԴԻ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կես տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлис, Редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլեֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է տառաւորաբար 10—2 ժամ
(բացը կիրակի եւ առաջօրեայ).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիցիտով.

Յայտարարութիւնների համար վճարում են
լուրջաբանական տարաբանակցի 10 կոպեկով.
Տէլեֆոն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐՇԵՐՈՒՆԻ

Նատալիա Գերասիմովնա Տեր-Սարգսեան, Սայմէ Գերասիմովնա Ղազարեան, Մը-
կրտիչ, Ալեքսանդր եւ Լեւոն Գերասիմովիչ եղբայրներն են ցաւով արտայայտու
են իրանց թանկագին եղբոր՝

ԿՈՆՏԱՆՏԻՆ ԳԵՐԱՍԻՄՈՎԻՉ ԵՂԵԱԶԱՐԵԱՆՅԻ

վաղաժամ մահը եւ խնդրում են ծանօթներին ու բարեկամներին չնորհ բերել հանգու-
ցեալի յուղարկաւորութեանը սեփական տանից (Տուրքէնեփոկայեա փողոց—Վերին-
Սաղաւայեա—№ 10) դէպի Թանգոյեան եկեղեցին, Միքայելեան փողոցի վրա: Յուղար-
կաւորութիւնը տեղի կունենայ հինգշաբթի, հոկտեմբերի 17-ին, առաւօտեան ժամի
10-ին: Ամբիօքը—չորեքշաբթի, հոկտեմբերի 16-ին, երեկոյեան 6 ժամին: 1—1

ԲՈՎԱՆԴԱՅՈՒԹԻՒՆ

Մամուլը եւ հասարակական ըննադատու-
թիւնը.—Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ժամավաճա-
ռութիւն կը լինէր. Նամակ Փօթից. Ներքին
լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կ. Պօլսի լը-
րագիրներէ. Արտաքին լուրեր. ՀԱՅԱՍՏԱՆԻՆԵՐ.
—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.
Բեմի աշխարհը.

ՄԱՄՈՒԼ ԵՒ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԲԵՆԱ- ԴԱՏՈՒԹԻՒՆ

Եւրոպայի մահվան առիթով Եւրո-
պայում նորից բանակուի եւ ըննադատու-
թեան առիթ է դարձնում մամուլի եւ նրա
կատարած դերի նշանակութիւնը, ինչպէս
եւ նրա յարաբերութիւնը դէպի հասարա-
կական ըննադատութեան ոյժը: Հասարա-
կական կարծիքի մի գործը հասանք սկսել
է արտայայտվել մանաւանդ «փողոցային»
կոչված մամուլի դէմ:

Յայտնի է, որ Եւրոպական այնպիսի
երկրներում, ուր քաղաքակրթութիւնը,
մասնաւոր եւ բարոյական կուլտուրան շատ
բարձր մակերեւոյթի վրա են կանգնած,

մամուլը հանդիսանում է ոչ թէ հասա-
րակական կարծիքի ղեկավար եւ առաջ-
նորդ, այլ, զիտաւորապէս, հասարակական
կարծիքի արտայայտիչ, այդպէս շատ ան-
գամ հասարակական կարծիքը ինքն է դե-
կլարում մամուլը եւ ստիպում է նրան
չըջահայեաց լինել ու հաշի առնել հա-
սարակական արամադրութիւնը: Եւ հա-
սարակական կարծիքը Եւրոպայում միշտ
յարգանքով է վերաբերվում մամուլի այն
օրգաններին, որոնք կանգնած են իրանց
կոչման բարձրութեան վրա, որոնք չեն
աշխատում մոլորեցնել հասարակութիւնը
կեղծ ու պատիւ տրեկութիւններով,
կանխակալ դատողութիւններով, թունա-
ւորել հասարակութեան միտքը վնասակար
ձգտումներով: Հակառակ ուղղութեամբ
գործող մամուլի օրգաններին հասարա-
կական կարծիքը ատում է. «Հեռու սա-
պարէզից, ինձ պէտք չեն քո կարծիք-
ները, քո ղեկավարութիւնը, քո քարոզ-
ները, քո կեղծիքները եւ խաբէութիւննե-
րը: Եւ այդպիսի օրգանը ստիպված է
լինում կամ դարպաւնեցնել իր գոյութիւնը,
կամ դառնալով այս եւ այն անձի, սին-

գիլատի վարձկան, վաճառված թերթ,
շարունակել իր գոյութիւնը կազմակի
նպատակներով:

Այդ է պատճառ, որ քաղաքակրթ եւ-
րոպայում, ուր հասարակական կարծիքը
շատ զարգացած է, ամեն մի լրագիր, որ
կամենում է քաղաքակրթական դեր կա-
տարել, որի նպատակը գրեթե անհրաժեշտ
է, զգուշանում է միշտ դաւաճանել բա-
րոյականութեան, զրական էթիկայի եւ
ազնւութեան սկզբունքներին, լաւ իմա-
նալով, որ հասարակական կարծիքը հան-
դիսանում է սանձահարող, զսպող ոյժ,
մի եւ նոյն ժամանակ գրգիռ խթան դէպի
ազնւիւ, շիտակ գործունէութիւն:

Թուելով մամուլի նշանակութեան եւ
կատարած դերի մասին Եւրոպայում,
առաւել մամուլը, որի գոյութեան երկ-
հարկաւորութեան լրանում է եկող տարի,
հարց է բարձրացնել արժանաւոր կերպով
տոնախմբելու այդ երկհարկաւորութեան յո-
բելեանը: Այդ առիթով մի յետադարձ
ակնարկ գցելով մամուլի գործունէութեան
վրա, ըննադատները ցոյց են տալիս, որ
մամուլը Ռուսաստանում հանդիսացել է
միշտ հասարակական կարծիքի ղեկավար
եւ առաջնորդ, որ նա, առաւել մամուլը,
ի դէմս իր շատ արժանաւոր ներկայա-
ցուցիչների, կանգնած է եղել, սակաւ
բացառութեամբ, իր կոչման բարձրու-
թեան վրա, որքան նրան թոյլ են տուել
պայմանները եւ ժամանակի հանգամանք-
ները: Մամուլը ոչ միայն նպատակ է
առաւել ինքնագիտակցութեան զար-
գացման, այլ եւ ստեղծել է հասարակա-
կան ըննադատութիւն եւ կարծիք, եւ այ-
սօր հասարակական այդ կարծիքը շատ
լաւ գիտէ զանազանել անաչառ, իր կոչ-
ման բարձրութեան վրա կանգնած մա-
մուլը այն մամուլից, որ աշխատում է

մոլորեցնել հասարակական կարծիքը եւ
առողջ մտաւոր անդի փոխարէն թունա-
ւոր սնունդ է մատակարարում հասարա-
կութեան: Ընդհանուր առմամբ, առաւել
մամուլը քաղաքակրթական մեծ դեր է խա-
ղացել եւ նա լրակատար իրաւունք ունի
տոնելու իր գոյութեան երկհարկաւորութեան
յօբելեանը: Սակայն չը նայելով այդ բոլոր
իրաւունքներին, առաւել մամուլի լուրջ օր-
գանները բացասաբար են վերաբերվում
այդ տոնախմբութեան եւ համարում են
վաղաժամ, անիրիւ, որ առաւել մամուլը
գեւե չէ կարողացել անթերի կերպով կա-
տարել իր պարտաւորութիւնները:

Կը կատարվի այդ յօբելեանը թէ ոչ, բայց
կովկասեան մամուլը, որ աճել, զարգացել
է առաւել մամուլի ազդեցութեան տակ,
չէ կարող չողջունել քաղաքակրթական
այն մեծ գործը, որ առաւել մամուլը կա-
տարել է իր գոյութեան երկհարկաւորութեան
ընթացքում: Մեր խօսքը, ի հարկէ, չէ
վերաբերում մամուլի այն մասին, որ սո-
վորաբար յայտնի է «փողոցային» անունով:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԺԱՄԱՎԱՃԱՌՈՒԹԻՒՆ ԿԸ ԼԻՆԻՐ

На всякое чиханье не надздравствуешься.

Պատաստվում էի հերքումս գրել Վասիլի
Վելիչիի խմբագրութեամբ լոյս տեսնող «Рус-
ский Вестник» ամսագրի հոկտեմբերի տետ-
րում «Навевшая недоразумения» (Վովկասեան
տարածախոսութիւններ) ներքին տետրեան մի
կտորի մասին (եր. 739—741), որ նոյն Վելիչի-
ի գրածն է, եւ շարունակ մտածում էի՝ ար-
ժէ—չարժէ: Նոյն մտքով զբաղված, միաժամա-
նակ թերթում, կարդում էի տետրի մնացած
բաժինները: Քանի ընթերցանութիւնս առաջ էր
գնում «արժէ—չարժէ» հարցը դարձաւ մի

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԲԵՄԻ ԱՇԽԱՐՀԸ

Բեմը մի տաճար է, որի բարձրութիւնից
դրամատուրգը պատգամներ է կորզում հասա-
րակութեան:

Մի քանի ժամկէտ ընթացքում հանդիսակա-
նի աչքի առաջով անցնում են ամբողջ մարդ-
կային կեանքեր, վերլուծվում են հոգեբանական
հանգոյցներ, ըննադատվում են հասարակական
եւ բարոյական բարդ խնդիրներ: Ժամերի ըն-
թացքում նրա առաջ չարժվում են կենդանի
մարդկային էակներ իրանց կրքերով ու տան-
ջնքներով, իրանց հայեացքներով, հակումնե-
րով եւ իրենց խնդիրներով: Խօսում են ու շարժվում
նրանք որոշ չորհրդային մէջ—մեջ ծանօթների
կեանքի մէջ, միեւնոյ կեանքի կոյւր իւրաքանչեւ
չէր իր ձեռք բերած դէպքով, ինի այդ դէպ-
քը խնդր, տաղանդ, բարոյական սկզբունքներ
թէ սրկալութիւն, անբարոյականութիւն, հո-
գեկան անարար, զարգելի մեքենայութիւններ
եւ լուրում է հանդիսական խօսքեր, որոնք մերթ-
ընդմիջ են համոզմունքի եւ անկեղծութեան
խորհրդից, մերթ արատաւանվում են միայն նրա
համար, որ ծածկեն հոգու սնանկութիւնը... Եւ
զերասանի ճակատի վրա անօրում են սար-
սափելի կնիքներ, դիմագծեր ցնցում են
յուզմունքի դողողութիւնները... Կենդանի մար-
դիկ են կանգնած այդ բեմի վրա, մենք ճանա-
չում ենք դրանց, դրանք մեր տեսած անձերն
են, մեր հայրերն ու եղբայրները, մենք ինք-
նեք:

Եւ հանդիսականը հիպնոսված յառում է իր
ամբողջ զգացողական ոյժերը դէպի բեմը, դե-
րասանների յուզմունքը վարդապետ է նրան էլ,
վերջում է նրա սիրան էլ, յարուցանելով նրա
մէջ համակրանք դէպի մէկը, հակակրութիւն

դէպի մի ուրիշը: Նա լալիս է գերասանի հետ,
ծիծաղում է, երբ սա է ծիծաղում: Մի հրաշ-
քային, անհեղ, հիպնոսական շաղկապով կապ-
վում է հանդիսականը գերակատարի հետ, կար-
ծես մի էլէկտրական թել է անցնել նրանց սր-
տերի մէջ:

Ոչ մի գրական աշխատութեան ոյժ այնպէս
բնիկէֆ կերպով չէ արտայայտվում, ինչպէս
բեմական գրողները, եւ նոյն գրողները եր-
բէք այնպիսի գործութեամբ չէ յափշտակում մեր
միտքն ու զգացմունքները, չէ կաշկանդում մեր
եռի անկախութիւնը, որքան երբ նա ներկա-
յացնում է բեմի վրա: Ինչպէս ուսուցիչը նուա-
ճում ու որոշ ուղղութիւն է տալիս աշակերտի
մտքերին ու զգացմունքներին, ինչպէս մեծ ա-
տենամբօսը որոշ ներշնչումներ է անում ուս-
կիցիներին, ինչպէս Նապօլեոնի պէս անհատ-
ներ նուաճում են բիւրաւոր մարդկանց կամը
եւ փոխում նրանց ամբողջ աշխարհայեցողու-
թիւնը, այնպէս էլ բեմի որոշ չափով հմտութիւն
է հանդիսականներին, ընկճում նրանց կամը,
որոշ ուղղութիւն տալիս նրանց մտքերին, երբեմն
յեղաշրջում նրանց հայեացքները կեանքի ու
բարոյականութեան վրա, ներշնչում որոշ աշ-
խարհայեցող, որոշ սկզբունքներ, որոշ իդէալ-
ներ: Իզուր չեն ասում, թէ բեմը մի զբա-
ղորդ է:

Իր գործութեան մէջ վսեմ ու անբիծ պիտի
մնայ բեմը, որպէս զի նրա ոյժը չը քանդէ,
այլ նորոգէ, վերականգնեցնէ ժողովրդի թու-
լացած, կամ փլատկված բարոյականութիւնը,
իդէալները, օգտակար ու բարի ձգտումները:
Մի ոյժ այն ժամանակ միայն օգտակար կա-
նող է լինել, երբ նա գործում է յանուն ճշ-
մարտութեան եւ արդարութեան, յենված գի-
տութեան վրա: Այլապէս նա դառնում է մի
պատուհան, մի անբիծ գործութիւն:

Եւ ասածս մանաւանդ ճշմարիտ է մեզ պէս
մի կիսակրթ ժողովրդի վերաբերմամբ, որը
այնքան հեշտ է ներկայիւրում ներշնչման, զուր-
կիւնով որ եւ է դիմադրական ոյժից, ամեն

կարգացածն ու լաւագէտը իւրի տեղ ընդու-
նող այս ժողովրդի:

Ճշմարտութիւն, անաչառութիւն եւ գիտու-
թիւն—այն բեմի կրթիչ գործութիւնը, սրանց
մէջն է նրա վեհ կոչումը:

Որչափ զգուշ պիտի լինել, որչափ մաքուր
պիտի ու վսեմ ձգտումներ եւ որչափ մեծ գի-
տական պաշար պիտի ունենալ բեմին մօտենալ
յանդգնելու եւ նրա բարձրութիւնից հասա-
րակութեան ներշնչումներ անելու համար:

Մի ուսուցից, որը պիտի այդ ու բեմ սովո-
րեցնէ անգրագէտ մանուկներին, պահանջվում
է գիտական ցննդ, որոշ հմտութիւն անկախ-
վարժութեան գիտութիւնների մէջ, որոշ հաս-
կացողութիւն մանկան հոգեբանութեան, ար-
չափ աւելի շատ պիտի պահանջվի մի դրամա-
տուրգից, քանի որ սա հասակաւորների հետ
գործ ունի, քանի որ պիտի խօսէ նրանց հետ
բարձր քաղաքականութեան մասին եւ լուսաբանէ
կեանքի իմաստը: Եւ եթէ պաշտօնագէտ ցննդ
չէ պահանջվում պիտի ցննդ, սա ինքը պիտի
բարեխղճօրէն վերաբերվի դէպի իր գործը,
հասկանալով իր անազնի պատասխանատու-
թեան ամբողջ խորութիւնը:

Յիսուն-վաթսուն տարի է արդէն, ինչ գի-
տութեան ուսումնասիրութիւնները մուտք են
գործել գեղարուեստական գրականութեան մէջ
եւ վէպն ու դրաման այլ եւս չեն կարող գո-
յութիւն ունենալ, եթէ նրանք չեն արտացո-
լում գիտութիւն եւ դիտողութիւն: Այն, ոչ մի
լուրջ գրողն է կարող այլ եւս արեւի երես
տեսնել՝ առանց խոր գիտական անալիզի բովի
միջով անցնելու:

Այս է պահանջում գիտութիւնը, այս է պա-
հանջում նոյնպէս եւ բարեխղճութիւնը:

Երբ մարդ ուսումնասիրում է բեմական
գրողները, տեսնում է, որ նրանք մի քանի
ման ամենից յաճախ նպատակ ունի ներկայա-
նելու արդիական կեանքի մի որ եւ է անկրթն
Այստեղ դուրս են բերվում ասորեայ շարուն

տիպեր, որոնք ապրում են որոշ սկզբունքնե-
րով, որոշ աշխարհայեցողով. այդ մարդիկ
չարժվում են ու գործում նոյնպէս որոշ չըջա-
վայրի մէջ, որին կպած են թէ իրանց հակու-
նեցող ու շահերով եւ թէ իրանց հոգեբանա-
կան հիւսուածքով. երբեմն հեղինակը այս շար-
քին, լուստինացած չըբանի մէջ գցում է
տարբեր շահերի կամ տարբեր հոգեկան հիւս-
վածքի տէր անձնաւորութիւններ, որոնք բո-
ղոք են բարձրացնում տիրապետող կարգերի
դէմ, աշխատելով նորոգել մտայն միջնորդը—
սրանք ըմբռններ են հասարակական կազմի
դէմ, այս անձները կամ ջանքալուծում են, արդ-
վում բոստիկայի տակ, կամ յաղթանակելով
յեղափոխում հասարակական կեանքը:

Մի ուրիշ կարգ բեմական գրողներում
մենք ականատես ենք լինում գործը ընդհա-
րուսներին նորի ու հնի մէջ, կամ հասարակա-
կան դատաւարների զանազան շահերի մէջ, կամ
հոգեբանական տարբեր շարժումների մէջ:

Երբեմն բեմի վրա դուրս են բերվում նաեւ
արտակարգ, իդէալացրած գրողութիւններ ու հե-
րոսներ, որոնք մէջ ամեն ինչ բացառել է—
թէ միջավայրը եւ թէ (որ գլխաւորն է) հե-
րոսների հոգեբանութիւնը: Այստեղ պապարեզ
են զալիս չէք պիտեան տիպեր—իդէալացրած,
ծայրահեղացրած հոգեկան յատկութիւններով:

Կայ եւ մի ուրիշ ձեւ—այդ զօգտակար-
տական դրաման է: Նրա նպատակն է ուղղա-
կի որոշ ուսմունք, որոշ դժգոյ, որոշ սկզբունք
մտնել կեանքի մէջ, որոշ իդէալ անցկացնել
Այսպիսի գրողները չեն ձգտում կեանքի, գո-
յութիւն ունեցող աշխարհի ու մարդկանց պատ-
կերը տալ, այլ ստեղծում են թէկուզ արտա-
կարգ գրողութիւններ եւ այնպէս դատաւորում նը-
րանց, որ հնարաւոր լինի իրանց գործող ան-
ձինքներին անել տալ այն, ինչ իրանք ցան-
կանում են:

Այս դրամայի մէջ համախառնային խնդիր-
ներն են ասպարեզ հանվում:
Մի անպաճոյճ կեանք, ինչպէս է մեր ողոր-

բուռն բողոքը Ոչ, չարժեք, յիմարութիւն, ժա-
մալաւորութիւն կը լինի արածը, թնդ, ուրիշ
բանի կաց:

Ինչը բերաւ հասցրեց ինձ այդ վճռին, թան-
գազին ընթերցողը:

Շուրջ 400 երեսից բաղկացած այս տետրի
ամեն մի երես, թիւ է, ամեն մի տող, որ վե-
րաբերվում է ուսու, օտար, համաշխարհային
կենսաբան, հերքում է պահանջում թերթում
եւ ամսագրերը առաջին երեսից սկսած թէ ինչ
է եղել ուսու բնութարանիկան շատ տարուց ի
վեր այս ամսագրում—մի կողմ Դոստոևսկի,
Լեւ Տոլստոյ, որ յամենայն դէպս ստիպված
են եղել այստեղ երեւալ, սրա մասին գրելը
երկար կը լինէր—զանազան Բոլշակով (Գոլովին),
Պոլոնսկի արտադրութիւններում—յայտնի է
ամենքին, որոնք մօտիկուց ծանօթ են ուսու
գրականութեան: Ոչ ոք այժմ աղմուկ չէ հա-
նել հոգեկանը «արուեստը»—արուեստի համար
դեմիդի առիթով, որքան պահպանողական կրի-
տիկոսները, դէմքը, որ պիտի նշանակէր, ի՞նչ
արուեստից հետո պիտի լինի տեղեկացում—
եւ սակայն ուսու կենսաբան ամենատեղեկացող
գրողները միայն հանդիսացել են նրանց բանակի
գրողները: Այն էլ ինչ տեղեկացում—ց եւր, ուղ-
ղակի աղբ են թափել իրանց անհամակրելի հո-
սանքների, կենսաբան երեւոյթների վրա, չը քաշ-
վելով պատկերից: Եւ այժմ էլ նոյն ոգով շա-
րունակում են:

—Բողոքը ուսու կենսաբան ուսումնասիրողը:

Ահա «По пути» («Ճանապարհին»), որ աւելի
ճիշդ վերնագիր պիտի ունենար «Сидя въ
своемъ кабинетѣ» («Առանձնասենեակում նրա-
տան») յօդուածը: Երբեք յօդուածագիրը երկար, շատ
երկար խնդ է օտարացում ուսումներին՝ ցեխ
չարտաբերով ոչ-ուսումների վրա:

—Բողոքն եւ լայնածաւալ Ռուսաստանի ոչ-
ուսու ազգութիւնների ներկայացուցիչները:

Ահա «Слонизмъ» յօդուածով Վելիչկին, ընկե-
րակցութեամբ մի ինչ որ բաբբի (семья
не безъ урода) պօրիցիային է մատնում սի-
նիզմի գործիչներին:

—Բողոքն «Восходъ», «Будущность» հրէ-
կան օրգանները եւ սիոնիզմի գործիչները:

Ահա Վասիլիյ Բոգանովի կէս-ազնիւ, կէս-
կեղծ գրիչը, օգնութեամբ հանգուցեալ Բա-
գանովի, ցեխտուում է Վ. Սոլովիւի յիշատա-
կը, անարգում «Вѣстникъ Европы» յարգված
ամսագիրը:

—Բողոքն Սոլովիւի յարգողները, հերք
«Вѣстникъ Европы» ամսագրի ղեկավարը:

Ահա մամուլի տեսութիւն, ուսու տեսն չէ

մեր միակերպ ու զանազակ կենսաբան, ուրիշ պա-
հանքներ է անում բնից, եւ ոչ Շէքսպիրը իր
հոգեբանական տխրանքներով, ոչ Հաուպտմանը
իր խոր փիլիսոփայական-հոգեբանական էղիտ-
ներով մեր ողորմելի կենսաբան շրջանակում չեն
կարող տեղաւորուել: Թող նայեն հեղինակները
իրանց շուրջը, նայեն գիտականին միայն յա-
տուակ թափանցիկ հայացքով եւ բերաւոր
ցաւեր կը գտնեն, որոնք իրանց զբաղման
նիւթ կարող են մատակարարել...

Իսկ ինչ են անում, ինչ են բերում դուրս բե-
րում: Անգիտանալով կամ արհամարհելով մեր
ազգի ստեղծելի գաւաթիկում, բեր են հանում
պիտանք, որոնց կարծես իրօնիայով զբաղա-
նունեն են տալիս եւ որոնց մէջ հերոսների
մտքի անակնթիւնը ծածկվում է փայլուն
գեղագիտական ու փոքուն եւ փոքած մենա-
խօսութիւնների տակ:

Փիլիսոփայական ու հասարակական խնդիրները
լուծելու համար մեր մէջ գեղ չեն ծնվել իր-
սէներ, Տոլստոյներ եւ Հաուպտմաններ:

Այն ինչ հարկւրաւոր կենսական հարցեր
սպասում են բերական մշակման: Պէտք է կոյր
լինի մարդ, որ չը տեսնի հայ ժողովրդի կա-
րեւորները: Ինչի չեն գրում, ինչի չեն մշակում:

Անցել են անդամային այն ժամանակները,
երբ Սունդուկեանները Պէպոնների առաջադեմ-
ներն էին բերում հանում: Fi done! Մի Պէպոն, մի
ձկնորս, դա միայն մանր-մանր մարդկանց է
վայել, մենք, նորերս, պիտի արցնենք Տոլստոյի,
Հաուպտմանի ու Ջուդերմանի հետ, պիտի հա-
մախարհային խնդիրներ լուծենք: Կարծես տա-
ղանդը, իսկական ձիւղը չէ կարող մասն
խնդիրների ուսումնասիրութեան մէջ արտա-
յայտվել եւ այդ անում են մարդիկ, որոնք
չառ բան պիտի սովորեն Սունդուկեաններից...

Անարարակոյ՝ ոչ մի անհոգութիւն չը կայ օրի-
նակ Ունէր իրաւունքը պիտի չըլտնի ու հայ
հասարակութեան մէջ, այդ պիտեւ հայկական է
լեզուով միայն եւ կարող է նոյն անաշուղու-
թեամբ ներկայացնել նաեւ ուսու ամերիկա-

հանումը այստեղ—եւ ֆիններին, եւ հայերին,
եւ ֆրանսիական այժման կառավարութեան:

—Վեր կենան բողոքն եւ հերքումները գրեն:
Ահա «Գրական տեսութիւն» Գնահատար աշ-
կարայ սեւը սպիտակ է ձեւացնում, առկում
«Սպառնալից-Շէքսպիր» ազատամարտերի, բողո-
կանների դէմ էր: Հօ գրանից էլ գերազանց
ստուգիւն:

—Բողոքն Շէքսպիրի յարգողները, նրա աշ-
խատանքից-դիտելից Ն. Միլայովսկին հերքէ:

Ահա «Ներքին տեսութիւն» անտամ յար-
ձակումն մի ամբողջ միջնաբերութեան դէմ, որ
չէ քայլում Վելիչկոյի սրտին ուղածի պէս,
դէմաւորների յայտնի գոյնի գործիչների դէմ
մեղադրանքներ:

—Հերք միջնաբեր, բողոքն զէմաւորների
այդ գործիչները:

Ահա ձեզ արտաքին տեսութիւնը: Կատարի
յարձակումներ Գերմանիայի դէմ, ֆրանսիական
կառավարութեան դէմ, որ, ըստ Վելիչկոյի եւ
նախնականների, քարոզանք է անում խղճ
Ֆրանսիան—հոգեւորականների յայտնի գործի
առիթով:

Խոսովին դեպքանքը, բողոքն Վելիչկոյի
անհաճախ յարձակումների դէմ:

Ահա վերջապէս էմիլ Զոլայի մահացուցակը:
Նա բացարձակ հոգեկան է «Ֆրանսիացի տա-
ղանդաւոր անբարոյականացում», այո, en toutes
lettres, «такалтивный развратитель Фра-
нция» (տես եր. 771):

Հերքն Ջոլայի յիշատակը յարգողները, բո-
ղոքն ֆրանսիացիները:

Միթէ մի այսպիսի հազարգլխանի վիշապի
դէմ բողոքելու հնար կայ, մէկ գլուխը կը կրտ-
րած միւսը կը բանի, ինչպէս մանուկ ժամա-
նակներս կարող էինք հէգիթներում:

Ահա, սիրելի ընթերցող, իմ պատճառներս,
որ հերքում լոյս չեկաւ Այծի, երեւի, դա էլ
ինձանից չես պահանջի «Կովկասեան տարա-
ձայնութիւնների» ոչ բովանդակութիւնը, ոչ
հերքումը: Ամենամեծ «տարաձայնութիւնը»
հենց Վելիչկոյների գոյութիւնն է ամեն տեղ եւ
ամեն ազգի մէջ:

Պետրոս Զաքարեանց
Ս. Պետրոսը:

ՆԱՄԱԿ ՓՈԹԻՑԻՑ

Հոկտեմբերի 8-ին
Փոթին էլ յետ չը մնաց միւս զաղաքներից

իր ընտրութիւններով Առանց աղմուկի եւ կու-
սակցութիւնների, նոյն իսկ անկախութիւն կեր-
պով, կատարվեցին քաղաքային ձայնաւորների

կան բաների վրա Սաակյան քանի որ նա մեր բնի-
կան է լոյս հանած, մենք ենթադրում ենք, որ
հեղինակը մի զօգմ է անցկացնում, մի սկզբ-
բունք զարգում, որով պիտի յղաշարժվի մեր
ընտանեկան կենսաբան, փոխվեն մեր հայացքները
ընտանեկան մարտութեան վրա:

«Ընտանեկան», բացականցում է ֆանտազի-
Արմաբարանը, էհ թողէք խնդրեմ, մեր մէջ
երբեք ընտանեկան գոյութիւն չէ ունեցել (!!!)
(Ճօտարարագէտ եւ ընտանեկան անուամբ):

Այս խօսքերից յետոյ հանդիսականն սպա-
սում էր, որ պիտեւ նրան պիտի տար նոր
ընտանեկան ուրուագիծը... Եւ ինչ է օտա-
նում—Մի մայր, մի հայ կին, որի կուլտը ու
պաշտամունքը երեխան է, որի ինչպէս ու
փառքը ընտանեկան քարոսութիւնն է, յանկարծ
մի լուրջ մայր օձի լեզուից խաղվելով, յափտակ-
ված նրա ցինիքական յայտնութիւնով, թէ կոյս
է մնացել, թողնում է ընտանեկան, թողնում է իր
օջախի վրա, փառական է մի,—գուցէ եւ
կուլտը, բայց սրտով չիտակ, գործով ազնիւ եւ
նրան վեց տարի փայփայող,—ամուսնու կենսաբան
Երեւանների օձին անգամ, իր արգանքի մէջ
օաղմկաւորում է իր ստիճակով անուշաճ երեխա-
ների սէրը, չէ կանգնեցնում այդ հրէշա-
ւոր վառաշուն կնոջ: Այո, վառաշուն, որով-
հետեւ քաղաքի է ուղարկւում նա, իսկ գիտէք
ինչ է նշանակում ապրել նորադոյն հայ
կնոջ համար: Այդ նշանակում է թողնել
ընտանեկան, մոռանալ երախտագիտութեան տա-
րական զգացմունքը, այդ նշանակում է պատ-
նել ամօթխածութեան քողը, պոկել սրտից
մայրական սէրը եւ թքել հասարակութեան
վրա, եւ այդ բոլորն անվում է ամենազաղելի
ետաժող նպատակով—մի կոյս մնացած երեխա-
սարդի սիրոյ համար:

Զարմանալով, մեզ անհասկանալի վտանգու-
թեամբ հեղինակը բարդում է այս հրէշաւոր
միտքը, թէ կնոջ մէջ ոչ մի զգացմունք չը
պէտք է ընկնէ կրթային սիրոյ զգացմունքը:
Բայց միթէ ապրելու ուրիշ շարժառիթ չէ

ընտրութիւնները, ապա կենտրոն եւ քաղաքա-
գլուխ: Խօսք չը կայ, ինչպէս «հայալ տուն-հա-
լալ օջախ», քաղաքագլխի ընտրութիւնը կը կա-
տարվի միտմայն եւ ամեն ինչ կը գնայ իր ըն-
թացքով:

Այսօր, ամսին 8-ին, ձայնաւորներին երդ-
վեցին, նրանց մէջ կային եւ հայեր, բայց տե-
ղին հայ քառանգան, ըստ սովորականի, բացակայ
լինելու պատճառով, վերջիններին ստիպված էր
վրաց քառանգան երդուեցնել:

Մենք մի քանի անգամ առիթ ենք ունեցել
լրագրութեան միջոցով բողոքել այդ քառանգանի
վարմունքի դէմ, բայց մինչեւ օրս ոչ մի ու-
ղաքութիւն դարձնող չը կայ: Գոյթիսիս գոր-
ծակալ աւաղ քառանգան Երախտանցը, ինչպէս
երեւում է, ծանր հիւանդ է, անկարող է տե-
ղից շարժվելու, իսկ Փոթիի հայ հասարակու-
թիւնը միտմայն մատնված է մոռացու-
թեան:

Մենք ներկայ նամակով դիմում ենք Թիֆ-
լիսի հայոց կոմիտեի անդամներին, յայտնելով, որ
մենք մնացել ենք առանց քառանգանի, մեր քա-
ռանգան շարունակ լինում է Թիֆլիսում: Եկե-
ղեքին կողպված է. ժամատացութիւն չէ լի-
նում: Մեր հոգեւոր պէտքերը կատարող չու-
նենք: Կին երեցփոխը հրաժարական է տուել,
իսկ նոր երեցփոխը ընտրելու իրաւունքը մեն-
չեւ այսօր չենք կարողանում ստանալ, եկեղե-
ցին քանդվելու վրա է, ամենաողորմելի դրու-
թեան մէջ է, չնորհիւ անտէրութեան Եկեղե-
ցու եկամուտները անհետացել են: Մի խօսքով
կատարեալ անխիստութիւն է տիրում Միթէ
այս բոլորից յետոյ մեր հոգեւոր իշխանութիւ-
նը նորէն անտարբեր կը գտնվի դէպի մեր բո-
ղոքը: Բողոքային ցանկալի չէ լրագրութեան
էջերը այս տեսակ հարցերով զբաղեցնել, բայց
ուսու դիմել, միակ ելքը միայն լրագիրն է:

Ա. Վրթանէսեան

ՆԵՐՔԻՆ ԿՈՒՐՑԻ

Երկուշաբթի, հոկտեմբերի 14-ին, հայոց
զբաղմունքային ընկերութեան խումբը տուեց
իր եօթերորդ ներկայացումը, կրկնելով Նա-
յեհօօփի «Վանիւնի» զաւակները: զբաղմունք եւ
իրեն յաւելում— «Ջարագուշակ Դեբիւտ» վո-
ղելով: Ներկայացումը, որ գրաւել էր թատ-
րոն հասարակութեան անգին բազմութիւն,
անգամ եւ նոյն անամբողջ, բացի մի փոփո-
խութիւնից զերականաւորների վերաբերմամբ,
կազմելայի դեր տիկին Ջաքելի փոխարէն
խաղում էր օր. Սարի-Հրանտը, որ նոր է

մնացել ընտանեկան տէր դասած մի կնոջ համար,
բացի սիրած մարդու հետ ապրելը, թէկուզ դրա
հետ կապված լինէր եւ երաժշտական կատա-
ծելի տաղանդը մշակել փոքր ճիւղի ցանկու-
թիւնը:

Սխալ է եւ վնասակար այդ սկզբունքը: Նա
ստորացնում է կնոջը, իբրեւ մարդու, նա լայն
բանում է մեր աշխու անբարոյականութեան,
սովորային կենսաբան դեմքը:

Եւ ինչի է այդ քարոզում պ. Շիրվազադէն:
Այդ է արդեօք կնոջ երանկութեան ձանա-
պարհը: Միթէ հեղինակը լրջօրէն կարծում է,
թէ իր Հերոսիան պիտի երջանիկ լինի իր ան-
կանօս կենսակցութեան մէջ այդ քաղաքակրթ-
ված Դոս-Ժոսանի հետ: Որչափ միամիտ պէտք
է լինել ենթադրելու համար, որ մի կին կա-
րող է չլնել իր օրտից ամուսնութեան ու մայր-
ութեան անցնելու: Կանցին տուփական շրջանը,
եւ Հերոսիան, մի օր յազեցած այդ մարդուց,
յանկարծ կը զգայ իր գտնակութեան սոսկալի
խորութիւնը, իր սրտի օտար դատարկութիւնը,
այն ժամանակ նա կտուէ իր հրապարակին եւ
նրա ատելութեան խորութիւնը հաւասար կը
լինի նրա անկման աստիճանին:

Մենք տեսանք, թէ ինչ է հայ կնոջ իրէպը
պ. Շիրվազադէի զբաղմունք:

Նրա մէջ կայ նաեւ օրիորդի տիպ (Ռուբին
Այրմարեանի քոյրը): Սա մի վարժուհի է՝ ար-
տասանական եղած, երկիրներ ու մարդիկ տե-
օած, ուրեմն եւ իր համար կենսաբան իրէպ
ստեղծած: Եւ գիտէք ինչ է այդ իրէպը—
բժշկութիւնը դառնում եւ գնալ... դուք կարծում էք
գիւղական խաւար շրջանը գործելու, օգտակա-
լինելու... ոչ, այլ մոռնել հարեմ, իբրեւ հարե-
մային բժշկուհի: Բայց գտնաւ այդ չէ: Նոյն
այդ հայ օրիգրգը յորդորում է Հերոսիային
զալ իր եղբոր սիրուհին դառնալ:
Կայ եւ այդ կնոջ հայրը, որը ոչինչ չունի, որ
իր աղջիկը այդ քաղաք ունէլ...
Ինչ ասենք հերոս Այրմարեանի մասին:
Հեղինակի աչքում օտ ամենահամակրելի անձ-

հրաւիրվել վարչութեան կողմից մասնակցելու
մի քանի ներկայացումների վարչութիւնը
հրաւիրել է նաեւ օր. Վ. Ֆեյսկեանին եւ տե-
ղին Սիրանոյչին, կամենալով ցոյց տալ հասա-
րակութեան բոլոր աշխատանքային նախա-
ժեբը: Մնում է, որ հասարակութիւնն եւս
խրախուսէ վարչութեան քայլերը յաճախելով
ներկայացումներին:

«Тифлискій Листовъ» լրագրում կարգում
ենք: «Թիբլիսկայալ» հայերից մի քանիսը,
որոնք փախել են Թիբլիսից, դիմում են
ստեղծագործական ցանկութիւն յայտնելով ու-
սանկապակութիւն ընդունելու, բայց օրոյնհետեւ
այդ տեսակ յայտարարութիւններ տալու ժամա-
նակամիջոցն անցել է արդէն, ուստի Թիբլիս-
կայալ հայերի խնդիրները մնում են անհե-
տեւանք եւ նրանց տաղարկվում է ձանապարհ
ընկնել դէպի հայրենիք:

Մենք ստացանք Վենետիկից պ. Սիմոն Նա-
հապետի հրատարակած մեծադիր, ֆոտոառկ
պատկերը «Ազգային Գործիչներ» վերագրով:
Այս պատկերի մասին մենք առիթ ենք ունե-
ցել խօսելու «Մշակի» մէջ անցեալներում: Այդ-
տեղ միմեանց մօտ, սեղանի ետեւում, շար-
ված են Բաֆֆի, Նալբանդեան, Պէլիկեան, Գրիգոր
Արծրունի, Ալիշան, Խրիմեան, Գաւառ-
Քաթիպա, Ս. Նազարեանց, Արտիման, Պետկե-
րը բաւական խնամքով է պատրաստված եւ
արժէ 1 ռուբլի 20 կոպէկ:

Թիֆլիսի բժշկական ընկերութիւնը մօտ օ-
րերում թոյլութիւն ստացաւ կազմելու
կովկասեան բժշկների բերորդ համագործով,
որ պէտք է տեղի ունենայ 1905 թվականի
ապրիլ ամսում: Համագործովի ծրագիրը նշանա-
ւոր չափով ընդարձակված է՝ համեմատելով
այն ծրագրի հետ, որով կազմված էր մի տարի
առաջ տեղի ունեցած երկրորդ համագործովը:
Նրա մէջ մտնում են բժշկական գիտութեան
բոլոր ճիւղերը եւ նրա հետ կապ ունեցող
ընտանեկան գիտութիւնները: Սրա հետ միասին
համագործովի ստորաբաժանումներ թիւը հաս-
րած է 16-ի: Հոկտեմբերի 16-ին, բժշկի Լու-
կովիչի նախագահութեամբ, տեղի ունեցաւ հա-
մագործովի կազմակերպող մասնագործովի առաջին
նիստը, որի ժամանակ ընտրվեցին այն անձինք,
որոնք պէտք է յանձն առնեն համագործովի բա-
ժինների կառավարելու:

Մեզ հաղորդում են, որ եկատերինսդարցի պ.
Յ. Աւետեան, հասցրած լինելով Թիբլիսի հայոց

նաւորութիւն է, բայց նրա վրա դատաւիճի-
արդէն: Կարգապէս է տեղական թերթերի մէջ:
Մեր աչքում դա այն ողորմելի, անպարտական
պիտանքներից է, որոնք ոչ մի դրական կողմ
չունեն, որոնք իրանք եւս խաղաղութեան են
խաւարի մէջ, որոնք ուղեղների զարգացումը
մանկական աստիճանի վրա կանգ է առնում,
որոնց հոգու ու մտքի ամբողջ դատարկութիւ-
նը ծածկվում է բերան արտած անպարտական
բայց հնչուն ֆրագաներով: Նրանց համար ոչինչ
նշանակութիւն չունի մի ընտանեկան ապագան
փառականը, նրանց գաճաճային ուղեղը եւ
դատարկ սիրտը չէ կարող ըմբռնել օրիշի բա-
րօրութիւնը եւ երջանկութիւնը յարգելու
զգացմունքը: Նրանք արհամարհում են օտար
աշխատանքը եւ իրանց ապիկարութիւնը ծած-
կում են բանաստեղծական փայլուն ընդդի-

Մենք չենք ուզում ամբարաման ըննադատել
այս տարրորդական պիտեւ եւ զարմանում ենք, որ
հեղինակը վստահանում է զարդել այնպիսի
սկզբունքներ, որոնց դէմ բողոքում են մարդու
թէ սիրտը, թէ հոգին եւ թէ ուղեղը:

Լու չէր լինի արդեօք, որ այդպիսի բարդ
խնդիրների մշակումն թողնենք գիտնականներին
եւ առաջադնենք: Չէ կարելի այդպիսի անգղյժ
կերպով շօշափել հասարակական-ընտանեկան խնդ-
րիկները: Դրա համար բաւական չէ ֆանտազիայի
մի թռիչք, այլ խոր գիտական ուսումնասիրու-
թիւն ընտանեկան, իբրեւ մի մեծ պատկանելի
սօցիալական ինտիմութեան, որը միջեւ անգամ
իր բնագիտական հիմունքն ու պատմու-
թիւնն ունի: Չէ կարելի ֆանտազիայով բացա-
րիկ զորութիւններ ստեղծելով, քանդել աւան-
դական եւ էլօլիցիայի օրէնքների վրա հիմն-
ված մի մեծ ինտիմութեան հիմունքները, երբ
անկարող եւ նրա տեղը մի ուրիշ բան դնել
Չէ որ մեր գուլ զանազակ անկարող է գործնա-
հանգստից կտրել, դրա համար Ալեքսանդր
Մակեդոնացու սուրն է հարկաւոր...

Электронизация Групп. Москва, Т-вр. Б.-Варшавская ул.